ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան «07» Մայիսի 2026 թ.

ՈՐՈՇՈՒՄ N 21-Ա

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 12-րդ կետով և հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 9-ի N 440-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունները՝ հայտատուների կողմից ներկայացված հայտերը և դրանց կից ներկայացված փաստաթղթերը Հավելվածի սահմանված չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար հետևյալ հայտատուների կողմից ներկայացված հայտերը՝

1) հայտատու ֆիզիկական անձ Լեմզա Հունանի Հունանյանի հայտն այն հիմնավորմամբ, որ հայտատու ֆիզիկական անձ Լեմզա Հունանի Հունանյանի կողմից չեն ներկայացվել Կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար անհրաժեշտ հիմքեր և հիմնավորումներ, մասնավորապես՝ Հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ վերջին հինգ տարվա ընթացքում կառավարությանը ենթակա մարմնի օրենսդրությամբ

նախատեսված հիմնական ոլորտներում իրականացված առնվազն երկու ծրագրի մասնակցության վերաբերյալ,

2) հայտատու ֆիզիկական անձ Շահեն Շահինյանի հայտն այն հիմնավորմամբ, որ դրան կից ներկայացված փաստաթղթերի և նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հայտատուն, ի թիվս այլնի, գործունեություն է ծավալել գեոդեզիայի, քարտեզագրության և չափագրության ոլորտներում: «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքի 16.1-ին հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական և հաշվառման գործունեությամբ կարող են զբաղվել Կոմիտեի կողմից որակավորման վկայական ստացած անձինք: Մինչդեռ հայտատուի կողմից հայտին կից չի ներկայացվել գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական և հաշվառման գործունեության ոլորտներում որակավորում ունենալու փաստը հավաստող փաստաթուղթ: Հայտատուի՝ հիշյալ որակավորման բացակայությունը փաստվում է նաև Կոմիտեում առկա տեղեկատվությամբ, ուստի՝ հայտով և կից փաստաթղթերով, չի հիմնավորվում Հավելվածի 6-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխանությունը, ինչպես նաև հայտատուի կողմից նախկինում ներկայացված հայտը մերժվել է և որևէ նոր փաստական կամ իրավական հանգամանք չի ներկայացվել,

3) հայտատու իրավաբանական անձ «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ-ի հայտն այն հիմնավորմամբ, որ հայտատուի կողմից չեն ներկայացվել Կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար անհրաժեշտ հիմքեր և հիմնավորումներ, մասնավորապես՝ ՀԿ-ի կողմից Հավելվածի 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ վերջին հինգ տարվա ընթացքում կառավարությանը ենթակա մարմնի օրենսդրությամբ նախատեսված հիմնական ոլորտներում իրականացված առնվազն երեք տարվա գործունեության փորձ ունենալու և այդ ժամանակահատվածում

առնվազն երկու ծրագրի մասնակցության վերաբերյալ, ինչպես նաև հայտատուի կողմից նախկինում ներկայացված հայտը ևս մերժվել է:

5/7/2026

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393